«Երևանի Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա - ***Ժամանակակից Մեթոդների Կիրառումը Ավագ Դպրոցում***

Առարկա՝ ***Անգլերեն***

Ուսուցիչ՝ ***Ռուզաննա Մազմանյան***

Ղեկավար՝ ***Մանուշակ Պետրոսյան***

Երևան, 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդներ

Եզրակացություն

Օգտագործված գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ ավագ դպրոցում կիրառվող անգլերենի դասավանդման ժամանակակից մի քանի մեթոդներ։

Այսօր ավագ դպրոցի աշակերտի առջև դրված կարևորագույն առաջադրանքներից ու նպատակներից մեկն անգլերենի իմացության խորացումն է և զարգացումը։ Օտար լեզվի դասավանդումը բարդ և համակարգված գործընթաց է, որը ենթադրում է տարբեր մեթոդների ու մոտեցումների կիրառում։ Հետազոտական աշխատանքում առաջարկված մեթոդների ճիշտ և արդյունավետ կիրառումը կարող է նպաստել սովորողների լեզվական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև անգլերենի գործնական կիրառման հմտությունների կատարելագործմանը։ Հետազոտական աշխատանքում դիտարկվում են արդի դասավանդման մեթոդների կիրառմամբ օտար լեզվի բառապաշարի և քերականական ժամանակաձևերի մատուցման արդյունավետ միջոցներն ու սկզբունքները, ինչպես նաև ներկայացվող մեթոդների բովանդակությունը, առանձնահատկությունները, դասավանդման քայլերի հաջորդականությունը, դասաժամի արդյունավետ օգտագործումը, նյութի ճիշտ բաշխումը ժամանակի մեջ և այլ մեթոդական նրբություններ։ Անդրադարձ է կատարվում նաև ուսուցման ոճերին, որոնք մեթոդի ընտրության հիմքում են։ Դրանցով են պայմանավորված նաև դասավանդողի և սովորողի դերը, իրավունքներն ու պարտականությունները դասավանդման գործընթացում։ Որոշ մեթոդներ մկրտված են զարգացնելու լեզվի ուսուցման բոլոր հմտությունները՝ լսել, խոսել, գրել, կարդալ, իսկ մյուսները շեշտը դնում են կոնկրետ հմտությունների վրա։

Մեթոդի ընտրության հարցում կարևոր է նաև հաշվի առնել, արդյոք դասընթացն անհատական է, թե՝ խմբակային, ինչ ունակություններ և գիտելիքների բազա ունի սովորողը և այլն։

Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր մեթոդներ, պարբերաբար անցում կատարել նորագույն մեթոդների, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հոկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ։ Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակել, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների։ Հանրակրթական ավագ դպրոցում անգլերենի դասավանդմանը մեծ ուշադրություն է դարձվում, քանի որ այն բուհին նախորդող կառույց է և սովորողների մասնագիտական կողմնորոշման կարևոր միջավայր, որում մեծ դեր ունի անգլերենը, նրա նկատմամբ հարաճուն պահանջը, որպես միջազգային և միջմշակութային հաղորդակցման միջոցի։ Սովորողների օտար լեզուների գիտելիքների հարստացման նպատակով ավագ դպրոցում կարևորում է անգլերենը՝ գիտական հետազոտության ամենահատկանշական մեթոդներին ծանոթանալու, դպրոցում նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների, դասավանդման մեթոդների ու մոտեցումների կիրառման հարցերում։ Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են, որոնց շնորհիվ լուծվում են դասապրոցեսի հետ կապված շատ խնդիրներ։ Ավագ դասարաններում բանավոր խոսքը զարգացնելու համար համացանցից ընտրվում են նյութեր թեմատիկ,

իրադրային տեքստեր, մենախոսություններ ու երկխոսություններ, տեղեկատվական տեքստեր, հատվածներ գրականությունից և այլն։

Ինչպես գիտենք, վերջին տարիներին կրթական ոլորտը մշտապես փոփոխությունների է ենթարկվում, որոնք առավելապես վերաբերում են կրթական համակարգի դասավանդման մեթոդներին: Իսկ ի՞նչ է մեթոդը: Դասավանդողի համար մեթոդը լեզվական նյութի մատուցման և դասավանդման գործընթացի կազմակերպման, իսկ սովորողի համար՝ մատուցված նյութի առավելագույնս արդյունավետ ընկալման, յուրացման և վերարտադրման ձևն է: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման դեպքում առանցքային կարևորություն ունի ուսուցման ժամանակացույցի մեջ նյութի ճիշտ բաշխումը: Թե՛ դասավանդողը, թե՛ սովորողը նախապես պետք է համաձայնության գան տվյալ դասընթացից ակնկալվող արդյունքների շուրջ: Դասավանդողը պետք է տեղեկացնի սովորողին, թե տվյալ ժամանակահատվածում, ինչպիսին կարող է լինել այն առավելագույն արդյունքը, որը հնարավոր է գրանցել, և երկուստեք պետք է փոխադարձաբար հետևողական լինեն գիտելիք տալու և ստանալու հարցում: Համացանցի՝ մեզ տրամադրվող ռեսուրսները հսկայական են, որոնց շնորհիվ լուծվում են դասապրոցեսի հետ կապված շատ խնդիրներ: Ավագ դասարաններում բանավոր խոսքը զարգացնելու համար համացանցից ընտրվում են նյութեր թեմատիկ,իրադրային տեքստեր,մենախոսություններ ու երկխոսություններ, տեղեկատվական տեքստեր, հատվածներ գրականությունից և այլն: Ինչպես գիտենք, վերջին տարիներին կրթական ոլորտը մշտապես փոփոխությունների է ենթարկվում, որոնք առավելապես վերաբերում են կրթական համակարգի դասավանդման մեթոդներին: Այս կամ այն մեթոդի ընտրությունն ու կիրառումը չպետք է լինի ինքնանպատակ: Սովորաբար տարբերակում ենք ավանդական և ժամանակակից մեթոդներ: Ավանդական մեթոդների հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության փոխանցումը սովորողներին, իսկ ժամանակակից մեթոդների հիմքում՝ վերջիններիս սեփական ունակությունների և հմտությունների,այսինքն՝ խոսքային գործունեության բոլոր չորս

տեսակների՝ ընթերցանություն, ունկընդրում, բանավոր խոսք և գրավոր խոսք, գործնական կիրառումը, նոր մատուցվող նյութի ինքնուրույն ընկալումը և ստեղծագործական մոտեցումն ապահովելու համար։ Հետևաբար շատ ավելի հաճախ բարձրացվում է ժամանակակից մանկավարժական այնպիսի տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում կիրառելու խնդիրը, ինչպիսիք են համագործակցային ուսուցումը, ուսուցման կոլեկտիվ եղանակը և այլն։ Դրանք օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում և ապահովում անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, գիտելիքների մակարդակից ու հակումներից, թեև Հայաստանում դեռևս պահպանվել են դասավանդման ավանդական մեթոդները։ Վերջին տարիներին, սակայն, դիտվում է դասապրոցեսում ժամանակակից մեթոդների ու մոտեցումների կիրառման միտում, որը մեծապես պայմանավորված է պետական կրթական չափորոշիչների պահանջներով և առարկայական բովանդակությամբ՝ գիտելիքներ, կարողություններ/ հմտություններ և արժեքային համակարգ։ Դասավանդման մեթոդներ ընտրելիս պետք է հաշվի առնել ոչ միայն դրանց արդյունավետությունը, այլև՝ լսարանի պատրաստվածության մակարդակը։ Օրինակ՝ դասարանում արդյունավետ ընթերցում կազմակերպելու համար ուսուցիչը պետք է նախապես պլանավորի դասի ընթացքը՝ նշելով դրա նպատակը, ընտրի ընթերցանության նյութը և դասի կազմակերպման մեթոդը կամ մեթոդները (երբեմն նա կարող է համատեղել մի քանի մեթոդ), որոնց կիրառմամբ ավելի մատչելի կդառնա մատուցվող նյութը՝ առանձնացնելով սովորողների համար բարդ հատվածները։ Հիմնական դպրոցի ավարտին սովորողները հասնում են լեզուների իմացության համաեվրոպական սանդղակին համապատասխան A2, այսինքն՝ նախաշեմային մակարդակին

խոսքային գործունեության հիմնական տեսակների կիրառմամբ, որը նրանց հնարավորություն է ընձեռնում ավագ դպրոցում շարունակելու

լեզվական կրթությունը ընդհանուր, հումանիտար կամ բնագիտական հոսքերում: Ավագ դպրոցում օտար լեզուների դասավանդումը նպատակաուղղված է սովորողների լեզվահաղորդակցական կոմպետենցիաների զարգացմանը, նրանց՝ լեզվակրթության ընթացքում առկա դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու հմտությունների ձևավորմանն ու զարգացմաը, ինչպես նաև խոսքային կարողությունների կիրառմանը, նպատակաուղղված փոխներգործուն մեթոդներով աշխատանքի ու ռազմավարությունների յուրացմանը: Ավագ դպրոցում օտար լեզուների ուսուցման արդյունքում զարգանում ու կատարելագործվում են սովորողների հաղորդակցական կարողություններն ու հմտությունները, ընդլայնվում է նրանց բառապաշարը: Օտար լեզվի իմացության մակարդակն ավագ դպրոցում ստացած կրթության ավարտին հասցվում է լեզուների իմացության համաեվրոպական համակարգի B1 (ընդհանուր և բնագիտական հոսքերում) և B2 (հումանիտար հոսքում) մակարդակներին:

Ուսուցման Փոխներգործուն

(ինտերակտիվ) Մեթոդներ

Այսօր բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Տերմինը կարելի է պարզաբանել հետևյալ կերպ. անգլերենում <<inter>>-փոխադարձ, <<act>>-գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի,երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի կամ համակարգչի հետ: Այսպիսով,ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է՝ հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման,սովորողի ազատության վրա:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

- Փոխազդեցությունը,փոխուսուցումը,
- սովորողի ակտիվությունը,
- համագործակցությունը.
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը և այլն:

Ուսուցման Ինտերակտիվ Մեթոդների Կիրառման Կանոններ

Կանոն 1

Աշխատանքում պետք է այս կամ այն կերպ ներգրավված լինեն բոլոր սովորողները:

Կանոն 2

Պետք է հոգալ սովորողների հոգեբանական պատրաստվածության և ուսուցման նկատմամբ շահագրգռվածության մասին: Դասին ներկա լինելը բավարար պայման չէ աշխատանքի այս կամ այն ձևին

ներգրավվելու համար։ Գործում են հայտնի արգելքներ,կաշկանդվածություն,վարքի ավանդական ձևեր։ Դրանք հաղթահարելու համար կարևոր են մշտական սովորողներին իրենց աշխատանքի համար խրախուսելը՝ հնարավորություն ընձեռնելով,որ նրանք իրացնեն իրենց ընդունակությունները։

Կանոն 3

Ինտերակտիվ ուսուցման դեպքում ցանկալի չէ սովորողների մեծաքանակ խումբը։ Եթե խումբը մեծաքանակ է,արդյունավետ է աշխատանքը կազմակերպել փոքր խմբերով աշխատանքի դեպքում կարևոր է,որ բոլորը արտահայտվելու հնարավորություն ունենան,յուրաքանչյուր ենթախմբին անհրժեշտ է հնարավորություն տալ ներկայացնելու իրենց տեսակետը խնդրի վերաբերյալ։

Կանոն 4

Դասասենյակը պատրաստել աշխատանքն սկսելուց առաջ։ Դասարանը այնպես պետք է կարգավորել,որ սովորողները հեշտությամբ աշխատեն մեծ և փոքր խմբերով։ Ցանկալի է,որ նստելու դիրքը կամ աթոռների դասավորվածությունը նպաստեն դրան (շրջանաձև,եղևնու ձևով և այլն)։ Աշխատանքի ընթացքում անհրաժեշտ նյութերը պետք է պատրաստել նախօրոք։

Կանոն 5

Հետևել ժամանակին։ Ժամանակի վերաբերյալ պետք է պայմանավորվել աշխատանքի սկզբում և ձգտել պահպանել պայմանավորվածությունը։

Կանոն 6

Կիրառել փոքր խմբերի բաժանման որոշակի սկզբունքներ՝ կամավորության,պատահական ընտրությամբ, ըստ հետաքրքրությունների և այլն։

Դիտարկենք ավագ դպրոցում անգլերենի դասավանդման համար առավել հաճախ կիառվողմի քանի ժամանակակից մեթոդներ,որոնք միաժամանակ նպաստում են միանգամից մի քանի հմտությունների զարգացմանը։

1 <<**Կանխատեսման ուղեցույցը**>> սովորողներին ակտիվացնող,նրանց արտահայտած գաղափարները կիրառելու միջոցով տեքստի բովանդակությունը կանխագուշակող մեթոդ է։ Մինչ տեքստի ընտրված հատվածի ընթերցումը ,սովորողները պատասխանում են որոշ հարցերի,որոնք հակասում կամ հաստատում են տեքստի տվյալ հատվածի բովանդակությանը։ Այնուհետև նրանք քննարկում և մեկնաբանում են իրենց պատասխանները։

2. <<**Շրջագայություններ գրքի բաժիններով**>> մեթոդը տեղեկություններ է հաղորդում գրքի կառուցվածքի մասին՝ ցույց տալով տեքստի հատուկ ուշադրությանն արժանի հատկանիշները։ Այս մեթոդը կիրառելիս ուսուցիչը նախապես ընտրում է տեքստի այնպիսի հատված,որը կարող է հետաքրքրել սովորողներին՝ ներգրավվելով նրանց ընդհանուր տեքստի մասին,հարցնում, թե ո՞ր բառերն օգնեցին հագնել այդ եզրակացությանը և տալիս նրանց հատվածը վերընթերցելու հնարավորություն։ Մեթոդը օգնում է զարգացել թե՛ ընթերցանական և թե՛ խոսելու ունակությունները։

3 <<**Հասկացության քարտեզագրում**>> մեթոդը կիրառելու դեպքում ուսուցիչը սովորողներին ցուցադրում է հասկացության քարտեզը՝ նշելով այն հարցերը,որոնց վերջիններս պետք է պատասխանեն։ Նրանց հանձնարարվում թիմերով աշխատել նոր հասկացության վրա՝ պահանջվող քարտեզը ստեղծելու համար և ստեղծված քարտեզից օգտվելով տալ հասկացության սահմանումը։

4 <<**Խճանկար**>> առաջադրանքը կարող է կիրառվել տարբեր ձևերով,օրինակ՝ սովորողները կարող են տրված տեքստից տարբեր հատվածներ կարդալ, ուսումնասիրել ուշադրության արժանի

ոլորտները,օրինակ՝ տեքստի բառապաշարը,քերականությունը,հիմնական գաղափարները,ոճը և այլն։ Այս մեթոդի կիրառումը ենթադրում է խմբային աշխատանք,ընդ որում խմբերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում առաջադրված թեմայի կոնկրետ ոլորտի ուսումնասիրության համար։ Հատվածների ընթերցանությունից հետո տեղի է ունենում սովորողների վերախմբավորում,որը նրանց հնարավորություն է տալիս համեմատել իրենց գրառումները,քննարկել տեղեկություններն ու իրենց կարծիքները։

5 <<Պրիզման>> ուսուցման հաճախակի կիրառվող մեթոդ է,որը օգտագործվում է դասի սկզբնական փուլում։ Սովորողներին տրվում է ուսումնասիրվող հասկացությունը։ Այնուհետև սխեմայի հաջորդ երկու վանդակներում գրանցվում են մեկնաբառի իմաստի հետ կապ ունեցող բառերը։ Արդյունավետ է կիրառել երեք շերտով բացված պրզման,որից հետո այն սկսում է փակվել,ընդ որում ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է։

Ընթացքը

- Տրվում է մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը,միտքը,թեման,ինչը ենթակա է ուսումնասիրության։

- Սխեմայի հաջորդ երկու վանդակներում առանց քննարկման գրանցվում են մեկնաբառի ազդեցությամբ մտքում ծագած առաջին երկու պատահական բառերը։ Հարկ է նշել նաև,որ խմբային աշխատանքի ժամանակ գրանցվում են առաջինը հնչած բառերը։ Պետք է հետևել,որ հնարավորինս կանխվեն գիտակցական մակարդակում ծնված բառերի ու հասկացությունների գրանցումը և խրախուսվեն ենթագիտակցական ոլորտում ծնված ասոցիատիվ կապերը։
- Ասոցիատիվ մտածողության վրա հիմնվող այս ընթացքը շարունակվում է մինչև վերջ։ Առավել արդյունավետ է երեք շերտով բացված պրիզման,որից հետո պրիզման սկսվում է փակվել։ Այս անգամ

վանդակները լրացվում են նախորդ երկու բառերի ասոցիատիվ կապը հաշվի առնելով:

- Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:
- Պրիզմայի ամփոփիչ քայլը մեկնաբառի ու վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է,որը պետք է իր արտացոլումը գտնի մեկ նախադասության կամ մտքի մեջ,վերջիններիս կարելի է անդրադառնալ հետագայում՝ նյութի ամփոփման ժամանակ:
- Այսպիսով,եթե պրիզմայի կառուցման ամբողջ ընթացքում ակտիվանում է ենթագիտակցական ոլորտը,ապա վերջին քայլում՝ մեկնաբառն ու սկզբնաբառը մեկ մտքի կամ նախադասության մեջ կապելիս՝ ակտիվանում է գիտակցական ոլորտը:

Ստորև բերված է վերոհիշյալ քայլերով կատարված մի օրինակ: <<Politics>> մեկնաբառով կարող են ստացվել պրիզմայի ամենատարբեր և բազմաթիվ տարբերակներ:



balances

7. <<T-աձև աղյուսակը>> կիրառվում է միևնույն հասկացության երկու կողմերը համեմատելու համար: Այն կարող է կիրառվել հատկապես խմբով աշխատելիս: Իր ձևով անգլերենի T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից,որտեղ գրանցվում են տրված հասկացության դրական և բացասական կողմերը: Այս մեթոդը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների գրառման համար:

Positive	Negative

8. **<<Վենի դիզրամը>>** կառուցվում է երկու հատվող շրջանաձև պատկերների միջոցով: Այն կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Օրինակ՝ ուսուցիչը կարող է հանձնարարել սովորողներին՝ Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի կառավարման համակարգերի մասին տեքստ ընթերցելուց հետո գտնել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Նա խնդրում է զույգերին գծել Վենի դիագրամ,շրջանագծերում առանձին բնութագրել երկու երկրների համակարգերը,իսկ կենտրոնում գրել նմանություններն ու ընդհանրությունները:



9. **<<Վեց մտածող գլխարկներ>>** մեթոդը մեծ աշխուժություն էառաջացնում սովորողների շրջանում: Սպիտակ գլխարկը հարցի մասին ներկայացնում է միայն փաստեր,թվեր,փաստարկներ,կարմիրը՝ արտահայտում է իր հույզերը, զգացմունքները,վերաբերմունքը,դեղինը ներկայացնում է հարցի դրական,իսկ սևը՝բացասական կողմերը: Կանաչ

գլխարկը ներկայացնում է հարցի զարգացումն ու հեռանկարները և կապույտ գլխարկը վերլուծում է քննարկման ընթացքը։

10. Ընթերցանության համար կիրառվող ժամանակակից արդյունավետ մեթոդներից է <<ԳՈՒՍ>>-ը,որի դեպքում ուսուցիչը մեծ թղթի վրա կամ գրատախտակին գծում է երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ և դրա վերևում գրում գլխավոր թեման՝ սովորողներին հարցնելով, թե ինչ գիտեն նրանք դասի թեմայի մասին։ Նրանց ասածները գրի են առնվում աղյուսակի առաջին՝ <<Ի՞նչ գիտենք արդեն>> սյունակի,իսկ թեմայի հետ կապված հարցերը՝ <<Ի՞նչ ենք ուզում իմանալ>> սյունակի մեջ։ Այնուհետև ուսուցիչը նրանց առաջարկում է կարդալ ընտրված հատվածը՝ գտնելով այն մասերը,որոնք պատասխանում են նախնական հարցերին։ Ընթերցանության ավարտից հետո աշակերտների ուշադրությունը հրավիրվում է երրորդ՝ <<Ի՞նչ ենք սովորել>> սյունակի վրա,որտեղ գրի են առնվում թեմայի վերաբերյալ կարդալու ընթացքում հայտնաբերված բոլոր տեղեկությունները։ Այս մեթոդի հիմնական առավելությունն այն է,որ այն ուսուցիչներին թույլ է տալիս պատկերացում կազմել առաջադրված թեմայի վերաբերյալ սովորողների նախնական գիտելիքների մասին,վերջիններս ընդգրկելով դրա քննարկման մեջ։

Քառաբաժան

Հետաքրքիր մեթոդական հնար է,որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս։ Քառաբաժանն արդեն ներկայացված շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կարարելիս։ Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ (գրատախտակ),որն անհրաժեշտ է բաժանել չորս մասի։ Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է,քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում։ Ստորև ներկայացված է

քառաբաժան աղյուսակի երկու ձև։ Բաժինների հանձնարարությունները

1. Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս։ Զգայություններ. • Տեսողական • Լսողական • Զգացողական • Համի և հոտի	2. Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս։ Վերաբերմունք. • Հույզեր • զգացմունքներ

1. Ի՞նչ ձայներ լսեցիք։	2. Պատմվածքի տրամադրությունը։
3. Երկու բանալի բառ։	4. Պատմվածքի թեման՝ սեփական բառերով։

պատահական չեն ընտրված,դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին,հետևաբար,նպատակահարմար չէ դրանք փոփոխել։ Կարելի է,իհարկե,դրանք զարգացնել՝ նկատի ունենալով ընկալմանև մտածողության մակարդակները (օրինակ՝ ըստ Բլումի դասակարգման)։

Ա)

Բ)

3. Կապը ձեր և իրական կյանքի հետ։ • Ասոցիացիաներ • Առնչություններ • օրինակներ	4. Նոր վերնագիր։ • Ընդհանրացում • Վերաիմաստավորում • Գնահատում

Իմ փորձից ելնելով կարող եմ հաստատել,որ վերը նշված մեթոդներն օգնում են ուսուցիչներին առավել արդյունավետ դարձնել դասապրոցեսը ավագ դպրոցում։ Օտար լեզվի դասավանդման ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում նաև քերականության ուսուցմանը,թեև վերջին տարիներին շեշտը դրվում է հատկապես սովորողների բանավոր խոսքի զարգացման վրա։ Ինչպես գիտենք,ՀՀ դպրոցներում քերականության դասավանդումը տարիներ շարունակ իրակացվել է ավանդական մեթոդներով,սակայն վերջին տարիներին դրանց փոխարինելու են գալիս ժամանակակից ինտերակտիվ մեթոդները,որոնք սովորողներին օգնում են ավելի լավ հասկանալ նախադասության կառուցվածքը,խոսքի մասերի տերբերակումն ու կիրառումը,բայերի ժամանակաձևերն ու խոնարհումը և բազմաթիվ այլ բարդ քերականական խնդիրներ։ Դրանց շնորհիվ վերջիններս ակտիվություն են ցուցաբերում դասի ժամանակ՝ չթաքցնելով իրենց հետաքրքրությունը թեմայի վերաբերյալ։ Ինչ վերաբերում է ուսուցանվող բառապաշարին,ապա պետք է նշել,որ ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում ուսուցանվում են ամենահաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները,հատուկ ուշադրություն է դարձվում թեմատիկ բառապաշարի ներմուծմանը։ Նոր բառապաշարն առավել հաճախ ներկայացվում է թարգմանական եղանակով, սակայն,անշուշտ, օգտագործվում են նաև բառիմաստի ներմուծման ոչ լեզվական ձևերը,ինչպիսիք են՝ նկարները,դիտաֆիլմերը,ժեստերը և այլն։ Սակայն չպետք է մոռանալ այն փաստը,որ ավագ դպրոցում սովորողները նույնպես տարբեր առաջադիմություն են ցուցաբերում։ Ընթերցանության,գրավոր և բանավոր խոսքի հետ կապված խնդիրներ ունեցող սովորողները շատ

հաճախ որոշակի դժվարությունների առջև են կանգնում թե՛ դպրոցում և թե՛ դրա սահմաններից դուրս: Նման

դեպքերում ուսուցչի խնդիրն է մշակել անհատական աշխատանք՝ օգնելու թույլ առաջադիմություն ցուցաբերող սովորողնորին

Մտագրոհ

Այս մեթոդի դեպքում սովորողները նախքան ընթերցանությունն ակտիվացնում են իրենց գիտելիքները և վերհիշում ,թե ինչ գիտեն այդ մասին:

Ստորև ներկայացնում եմ 11-րդ դասարանի Unit 8-ի “Chechks and Balances” տեքստի դասավանդման պրոցեսի ընթացքում կիրառված մեթոդները:Դասապրոցեսը սկսվեց <<մտագրոհ>> մեթոդով,երբ սովորողներին առաջադրվեցին մի շարք հարցեր:

1. What kind of country USA?
2. How many states are there in the USA?
3. Where is the seat of the central government?
4. What are the branches of the governance?
5. How do the three branches work?
6. What are the powers of the president?
7. How many political parties are there in the USA?

Հարցերին պատասխանելիս սովորողների մոտ ակտիվացան արդեն իսկ գոյություն ունեցող գիտելիքները,և նրանք վերհիշեցին,թե ինչ գիտեն այս թեմայի շուրջ:

Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը

Տեքստերի (հատկապես՝ սկզբնաղբյուրների) հետ արդյունավետ աշխատելու համար կարևոր է փոխներգործուն գրառումների համակարգի կիրառումը։ Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար։ Ընթերցելով նյութը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ-ի հետևյալ նշանները.

- V = հաստատում է իմ իմացածը (գիտեմ)
- + = նոր տեղեկատվություն է (չգիտեմ)
- - = իմացածին հակասում է
- ? = անհասկանալի է
- ! = հետաքրքիր է կարելի է քննարկել

Այս նշանների օգտագործումը ընթերցանության ընթացքում նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը՝ նորը, հակասականը և անհասկանալին ընդգծելու առումներով։

ՓԳՀ նշանների առատությունը արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի հետ կատարած աշխատանքի արդյունավետությունը։

Նյութը արդյունավետ յուրացնելու համար օգտակար է,որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ հետևյալ ձևով.

V	+	-	?	!

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքում ներկայացվում և վերլուծվում են ՀՀ ավագ դպրոցում կիրառվող անգլերենի դասավանդման ժամանակակից մի քանի մեթոդներ։

Այսօր ավագ դպրոցի աշակերտի առջև դրված կարևորագույն առաջադրանքներից ու նպատակներից մեկն անգլերենի իմացության խորացումն է և զարգացումը։ Օտար լեզվի դասավանդումը բարդ և համակարգված գործընթաց է, որը ենթադրում է տարբեր մեթոդների ու մոտեցումների կիրառում։ Հետազոտական աշխատանքում առաջարկված մեթոդների ճիշտ և արդյունավետ կիրառումը կարող է նպաստել սովորողների լեզվական հմտությունների զարգացմանը, ինչպես նաև անգլերենի գործնական կիրառման հմտությունների կատարելագործմանը։

Բանալի բառեր՝ հանրակրթական ավագ դպրոց,օտար լեզուներ,դասավանդման մեթոդներ,ինտերակտիվ մեթոդներ,լեզվական հմտություններ ու կարողություններ,պետական կրթական չափորոշիչներ և դասապրոցես

Գրականություն

1. Աստվածատրյան ՄԳ, Երզնկյան ԵԼ, Սուխուդյան ԱՀ Անգլերեն լեզու Հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր և չափորոշիչներ,Երևան, 2009։
2. Գրիգորյան Լ Անգլերեն 10-12 ուսուցչի ձեռնարկ ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար,Երևան,2011։
3. Միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների անգլերենի ծրագգիր և մեթոդական ուղեցույց։
4. Աստվածատրյան ՄԳ Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա,Երևան,1985։
5. Wright A., Betteridge D., Buckby M. Games for Language Learning Cambridge: Cambridge University Press, 2006.
6. Miller Ch. Ideas that Really Work! Activities for English and Language Arts. Colorado: Cottonwood Press,2009.
7. Jack C., Richards W., Renandya A.Methodology in Language Teaching. An Anthology of Current Practise. Cambridge, New York: Cambridge University Press,2006.
8. Medwell J. Wray D., Minns H., Griffiths V., Coates E. Primary English Teaching Theory and Practice. Trowbridge: Cromwell Press,2009.
9. Routledge S. Teaching English. New York,1994.
10. Goodwyhn A., Branson J. Teaching English: A Handbook for Primary and Secondary School Teachers. New York: Routledge,2005.